ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ:
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ,
ՊՐՈՖԵՍՈՐ ՍԲԲՈՒՀԻ ԶԵՔՈՐՅԱՆ
27.06.2025թ.

ԿԱՐԾԻՔ

Գայանե Խաչիկի Ղազարյանի «Հայրենադարձները Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքի համատեքստում /1946-1953 թթ./» է. 00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

2025 թ. հունիսի 27-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի նիստը, որին մասնակցում էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանը, պատմ. գիտ. դոկտորներ, պրոֆեսորներ Ա. Փիլիպոսյանը, Վ. Վիրաբյանը, Ս. Պողոսյանը, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Ա. Հարությունյանը, պատմ. գիտ. թեկնածուներ, դոցենտներ Է. Հովհաննիսյանը, Լ. Սիմոնյանը, Է. Մելքոնյանը, Ս. Խաչատրյանը, Ա. Եփրիկյանը, Մ. Եղյանը:

Քննարկվեց Գայանե Խաչիկի Ղազարյանի «Հայրենադարձները Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքի համատեքստում /1946-1953 թթ./» թեկնածուական ատենախոսությունը՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար:

Ելույթ ունեցան ատենախոսության գրախոսներ, պատմ. գիտ. թեկնածու պրոֆեսոր Է. Գևորգյանը, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Վիրաբյանը, պատմ. գիտ թեկնածու, դոցենտ Լ. Սիմոնյանը, ովքեր հրապարակեցին իրենց գրավոր կարծիքները:

Քննարկման արդյունքներն ամփոփեց ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պատ գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանը:

Сканировано с CamScanner

Ժամանակակից միջազգային իրավունքի համակարգում հայրենիք վերադառնալու հարցը առավել խճճված և վիճահարույց խնդիրներից է, որը շոշափվում է ամենատարբեր առումներով՝ կապված կամավոր և հարկադրված արտագաղթի ու ներգաղթի, պատերազմների ու զինված բախումների, սոցիալ-տնտեսական ու քաղաքական փոփոխությունների, կրոնական ու էթնիկական դրդապատճառներով տեղի ունեցող մարդկանց տարերային ու կազմակերպված տեղաշարժերի, ցեղասպանության, տեղահանությունների ու բռնագաղթի հետ:

Հայ ժողովրդի պարագայում այն առնչվում է թուրքական իշխանությունների կողմից բռնագաղթի ենթարկված և հայրենազրկված հայերի ու նրանց սերունդների հայրենիք վերադառնալու իրավունքի խնդրին: Եթե մինչև իսկ վերանանք այն իրողությունից, որ աշխարհով մեկ սփռված տարագիր հայության համար վերադարձը տուն մնում է իբրև ամենանվիրական տենչը, միևնույն է հայրենիք վերադառնալու խնդիրը կարոտ է մանրակրկիտ և անկողմնակալ քննարկման, քանզի այն շարունակում է մնալ որպես միջազգային դիվանագիտության ամենաչարչարված, բայց առայսօր լուծում չգտած հարցերից մեկը:

Միաժամանակ եթե ասվածին ավելացնենք նաև հայրենադարձությունից հետո առօրյա բազմապիսի խնդիրների հետ մարդկանց բախումը, ապա պատմական այդ գործընթացն ավելի ընկալելի կլինի:

Գայանե Ղազարյանի «Հայրենադարձությունը Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքի համատեքստում /1946-1953 թթ» խորագիրը կրող թեկնածուական ատենախոսությունը շատ հաջողված գիտական փորձ է հիմնախնդրի նորովի լուսաբանման բնագավառում: Այն անչափ կարևոր է այդ տարիների Խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, կրթամշակութային, հոգևոր կյանքի ամբողջական պատկերացումն ունենալու դիտակետից: Իսկ ընդհանրապես առօրեականության պատմության ուսումնասիրումը քաղաքական, գիտական, գործնական, ճանաչողական և արդիական մեծ կարևորություն ունի:

Գիտական շրջանառության մեջ դնելով մեծաքանակ արխիվային և մամուլի նյութեր, հայրենադարձների անձնական բնույթի հուշագրություններ, բանավոր հարցազրույցներ, պատմագիտական, հրապարակախոսական ուսումնասիրություններ, վեբ կայքեր, ատենախոսը գիտական բարեխղճությամբ քայլ առ քայլ բացահայտել է

Сканировано с CamScanner

հիմնահարցի առավել կարևոր կողմերը: Ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից բաղկացած աշխատանքում հեղինակը հանգամանորեն հիմնավորել է ատենախոսության արդիականությունը, հետազոտության նպատակն ու խնդիրները, աշխատանքի գիտական նորույթը, ժամանակագրական շրջանակները, հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը: Ի դեպ արխիվային շատ նյութեր շրջանառվում են առաջին անգամ:

Պատմաքննական, պատմահամեմատական և գիտական օբյեկտիվության մեթոդներին զուգընթաց ատենախոսը կիրառել է նաև <աղբյուրի հետ երկխոսության> մեթոդաբանական մոտեցումը և բանավոր պատմության հետազոտության մեթոդները, ինչն ավելի է արժևորել աշխատանքը:

Ատենախոսը հանգամանորեն լուսաբանել է Խորհրդային Հայաստանի հետպատերազմյան շրջանի բնակչության առօրյայի առանձնահատկությունները, պետական, կուսակցական մարմինների աշխատանքում տեղ գտած բացասական երևույթները, բնակչության սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական վիճակը, Հայ առաքելական եկեղեցու գործունեությունը և այլն:

Ուշագրավ են Խորհրդային Հայաստանում հայրենադարձների հաստատման և ինտեգրման խնդիրներին վերաբերող հեղինակի պատմագիտական բացահայտումներն ու վերլուծությունները: Նա մանրամասնորեն ներկայացնում է մինչև Հայաստան գալը հայրենադարձների ընկալումներն ու պատկերացումները խորհրդային պետության և խորհրդային իրականության մասին, որոնց մեծ մասը ցավալիորեն փոխվեց հայրենիք ժամանելուց հետո. առաջ եկան բազում խնդիրներ՝ տեղավորումից մինչև գաղափարական-քաղաքական:

Ատենախոսն օբյեկտիվորեն նկարագրել է հայրենադարձների փախուստի փորձերը, բացահայտել դրանց պատճառները, բերել կոնկրետ օրինակներ, անդրադարձել 1949 թ. աքսորի հետևանքով ստեղծված գաղջ մթնոլորտին: Իրավացիորեն այն միտքն է ընդգծվում, որ <Խորհրդային Միության սահմաններում հայտնվելուց հետո միայն ներգաղթյալները հասկացան, որ զրկված են հետ վերադառնալու հնարավորությունից: Մինչ այդ նրանք վստահություն են ունեցել, որ որևէ խնդրի դեպքում, կամ էլ, ըստ ցանկության և ունեցած ֆինանսական հնարավորության, կարողանալու են այցելել իրենց կեցության երկրներ, շփվել ազգականների ու մտերիմների հետ /էջ 95/>: Հեղինակը նշում

Сканировано с CamScanner

է, որ փախուստի առաջին փորձերը կատարվում էին նախքան Հայաստան գալը՝ Բաթումի նավահանգստից: Սակայն ավելի զուսպ և գիտական է ատենախոսի հետևյալ եզրահանգումը, որ <Ընդհանուր առմամբ, հայրենադարձների՝ ԽՍՀՄ-ից փախուստի դեպքերը զանգվածային բնույթ չկրեցին, սակայն դրանք դարձան հայրենադարձության քաղաքականության բացթողումներից մեկը>:

Պատմագիտական լուրջ արժեք են ներկայացնում խորհրդային իրականությանը հայրենադարձների ներգրավման գործընթացի պատմաքննական վերլուծությունները, մասնավորապես տեղացի-հայրենադարձ հարաբերությունների, նրանց միջև եղած մտածողության, ապրելակերպի, մշակութային, լեզվական տարբերությունների ընդգծումները և այլն:

Դիտարժան են նաև հայրենադարձների առօրյա կյանքում Խորհրդային Հայաստանի պետական-կուսակցական և կրթամշակութային կյանքին հայրենադարձների ներգրավվածության մասին կոնկրետ պատմական փաստերի վերհանումները:

Ընդհանուր առմամբ Գայանե Ղազարյանը ներկայացրել է ուշագրավ և կուռ գիտական աշխատանք, կատարել հիմնավորված եզրահանգումներ, հիմնականում լրացրել հիմնահարցի հետազոտության բնագավառում առկա բացերը և արժանի է դրվատանքի:

Այդուհանդերձ այս հաջողված ատենախոսության վերաբերյալ ցանկանում ենք արտահայտել որոշ դիտողություններ և նկատառումներ.

1. Մեր կարծիքով ատենախոսությունն ավելի կշահեր, եթե առաջին գլխում՝ <Խորհրդային Հայաստանի հետպատերազմյան տարիների առօրյա կյանքի առանձնահատկությունները> հեղինակը նույնպես համառոտ անդրադարձ կատարեր հանրապետության ժողովրդագրական վիճակին, ինչպես նաև կրթա-մշակութային դրությանը, ինչն ավելի կհստակեցներ տվյալ շրջանի առօրեականությունը:

2. 50-րդ էջում անդրադառնալով սփյուռքում գործող <առաջադիմական> կազմակերպություններին և դաշնակցականներին հայրենադարձությանը աջակցող տեղական կոմիտեներում չընդգրկելուն՝ հեղինակը որևէ պատճառ չի մատնանշում: Ճիշտ կլիներ դրանք համառոտ ներկայացնել:

3. Ճիշտ է, ատենախոսությունը հարուստ աղբյուրագիտական հենք ունի, սակայն կարծում ենք օգտագործված գրականության ցանկում պետք է տեղ գտնեին նաև

Сканировано с CamScanner

Հ. Վ. Հակոբյանի «Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական և իրավական հիմքերը», Երևան, 2002, Հր. Սիմոնյանի «Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում», Երևան, 1968, Տիգրան Ղանլարյանի «Հայկական սփյուռքի որոշ հիմնախնդիրներ», Երևան, 2021 աշխատությունները:

4. Անդրադառնալով հայագիտության զարգացման գործում հայրենադարձների ներդրմանը՝ ատենախոսը պարտավոր էր հիշատակել նաև անվանի պատմաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մանվել Զուլալյանի վաստակի մասին:

Անտարակույս, նշված դիտողություններն ու ցանկությունները ավելի կատարյալ գիտական աշխատանք ունենալու նպատակ են հետապնդում և ամենևին չեն նսեմացնում ատենախոսի կատարած մեծածավալ աշխատանքը: Գայանե Խաչիկի Ղազարյանի «Հայրենադարձները Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքի համատեքստում /1946-1953 թթ./» թեկնածուական ատենախոսությունը պարունակում է գիտական նորույթ, համապատասխանում է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ներկայացվող պահանջներին և պատրաստ է հրապարակային պաշտպանության, իսկ հեղինակն էլ լիովին արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ գիտական աստիճանին:

Կարծիքը հաստատված է ամբիոնի 2025 թ. հունիսի 27-ի նիստում /արձանագրություն թիվ 17/:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության
ամբիոնի վարիչի պաշտ.՝ պրոֆ. Է. Գևորգյան

Պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանի
ստորագրությունը հաստատում եմ
ՀՊՄՀ գիտ. քարտուղար դոց. Մ. Իսպիրյան

27.06.2025 թ.

Сканировано с CamScanner